

ԿՈՂ
050.0294 Ն. 08.06.05

08 հունիսի 2005 թվականի թիվ 294 Ն

**ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՆՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅԱՆ
ՊԱՀԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել Վճարահաշվարկային համակարգ վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրման և անվերադարձելիության պահը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

S. Սարգսյան

2005 թ. հունիսի 16
Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2005թ. հունիսի 8-ի թիվ 294 Ն որոշման

**ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՆՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅԱՆ
ՊԸԿԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

1. Մույն ակտով կարգավորվում է հայաստանյան վճարահաշվարկային համակարգերում վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրման և վճարահաշվարկային փաստաթղթերի անվերադարձելիության պահը:
2. Մույն ակտում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով:
3. Վճարահաշվարկային համակարգ (այսուհետ՝ համակարգ) վճարահաշվարկային փաստաթղթի մուտքագրման պահ է համարվում այն պահը, երբ վճարային գործիքը ընդունող համակարգի մասնակցի համար վճարային գործիքը հասանելի դառնալուց հետո, սկսվում է վճարային գործիքի տվյալների մշակումը տվյալ մասնակցի կողմից: Մույն ակտի իմաստով վճարային գործիքը ընդունող համակարգի մասնակցից է համարվում վճարման շղթայում ընդգրկված համակարգի առաջին մասնակցիցը, ում ներկայացվում է վճարային գործիքը՝ այն տիրապետողի կամ վճարումը նախաձեռնողի կողմից: Մույն ակտի իմաստով վճարային գործիքի տվյալների մշակումը վճարային գործիքը բնութագրող տվյալների հետ այնպիսի գործողությունների իրականացումն է, որոնց արդյունքում վճարային գործիքը ընդունող համակարգի մասնակցիցը կայացնում է որոշում՝ վճարային գործիքը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ:
4. Վճարահաշվարկային համակարգ մուտքագրված վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահ է համարվում այն պահը, երբ իրականացվել է համակարգի մասնակցիցների միջև ծագած դրամական պարտավորությունների վերջնահաշվարկը: